# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 23.04.2021թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի**
**թիվ ՍՑ-ՆԳ-2021/94**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Աքսիոմա» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Հ. Օհանյանի (լիազորագիր՝ տրված 16.04.2021թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 13.04.2021թ. թիվ 26/26-1/5535-2021 գրությամբ «Աքսիոմա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

**1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 07.04.2021թ. թիվ Ե/40/847-21 գրության հիման վրա, 13.04.2021թ. թիվ 26/26-1/5535-2021 գրությամբ նախաձեռնել է «Աքսիոմա» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

**2. «<u>Աքսիոմա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը</u>.**

«Աքսիոմա» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է գտնվում «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ (այսուհետև նաև՝ Պատվիրատու) գրավոր հիմքերի համաձայն, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «Աքսիոմա» ՍՊԸ-ին (այսուհետև նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետև նաև՝ Ցուցակ) ներառելու նպատակով նախաձեռնված թիվ՝ ՍՑ-ՆԳ-2021/94 ծածկագրով ընթացակարգը (այսուհետև նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգը նախաձեռնելու համար Պատվիրատուն ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացրել 07.04.2021թ.-ի թիվ Ε/40/847-21 գրությունը և կից նյութեր (այսուհետև նաև՝ Գրավոր հիմքեր):

Ուսումնասիրելով Ընթացակարգը նախաձեռնելու համար Պատվիրատուի ներկայացրած Գրավոր հիմքերը՝ հայտնում ենք, որ առարկում ենք դրանց դեմ:

1. Գրավոր դիրքորոշման համար էական նշանակություն ունեցող փաստերը.

1.1. 2020 թվականի նոյեմբերի 03-ին www.armeps.am էլեկտրոնային գնումների համակարգի (այսուհետև նաև՝ Էլեկտրոնային համակարգ) միջոցով Պատվիրատուն բաց մրցույթի ընթացակարգով հայտարարել է թիվ «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-28/20» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետև նաև՝ Մրցույթ): Մրցույթը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքով:

1.2. Մրցույթի արդյունքում Մասնակիցը ճանաչվել է ընտրված (հաղթող) մասնակից: 23.02.2021 թվականին Պատվիրտուի և Մասնակցի միջև կնքվել է «HAEK-BMAPDzB-28/20-01/001» ծածկագրով պայմանագիր (այսուհետև նաև՝ Պայմանագիր), որի ընդհանուր գինը կազմում է 1.300.000 (մեկ միլիոն երեք հարյուր հազար) ԱՄՆ դոլար:

1.3. Պայմանագրի 8.15 կետի համաձայն՝ «8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: (...): Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի

ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովները Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:»

1.4. Գրավոր հիմքերում առկա 11.03.2021 թվականի թիվ Ε/40/587-21 գրության համաձայն՝ Մասնակցին ներկայացվել է պահանջ՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին ներկայացնել ֆինանսական միջոցներ նախատեսվելու վերաբերյալ համաձայնագիրը (№ 1-01/001) և պայմանագրի գնի 110 տոկոսի չափով պայմանագրի կատարման ապահովումներ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով՝ «Պայմանագրի ապահովում» 10%-ի և «Որակավորման ապահովում» 100%-ի չափով:

1.5. Գրավոր հիմքերում բացակայում են՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելու վերաբերյալ №1-01/001 համաձայնագիրը (այսուհետև նաև՝ Համաձայնագիր) և պայմանագրի կատարման ապահովումները բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով ներկայացնելու վերաբերյալ պահանջը, Մասնակցին պատշաճ ուղարկելու հանգամանքը ապացուցող փաստերը:

1.6 Գրավոր հիմքերի համաձայն՝ Պայմանագիրը միակողմանի լուծվել է, քանի որ Մասնակիցը սահմանված ժամկետում՝ 11.03.2021թ-ից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին չի ներկայացրել Համաձայնագիրը և հրավերով պահանջվող որակավորման և պայմանագրի ապահովումները բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Ընդ որում, Մրցույթի հրավերի 9.1, 9.2, 9.3 կետերի համաձայն՝ որակավորման և պայմանագրի ապահովումները հանդիսանում են պայմանագրի կատարման ապահովումներ և նրանց չափը միասին հավասար է պայմանագրի գնի 110%-ին: Ընդ որում, Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ թիվ Ε/40/831-21 գրությունը թվագրված է՝ 2021 թվականի ապրիլի 6-ով:

1.7. 2021 թվականի մարտի 27-ին ուժի մեջ է մտել ՀՀ կառավարության 2021 թվականի մարտի 25-ի N 414-Ն որոշումը (այսուհետև նաև՝ Որոշում): Որոշմամբ փոփոխվել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով

հաստատված կարգը (այսուհետև նաև՝ Կարգ): Մասնավորապես՝ փոփոխության արդյունքում.

- «որակավորման ապահովման» առավելագույն չափը սահմանվել է ընտրված մասնակցի գնային առաջարկի 30%-ի չափով,
- որակավորման ապահովումը բանկային երաշխիքից բացի, կարող է ներկայացվել նաև ապահովագրական կազմակերպությունների կողմից տրամադրված երաշխիքի ձևով,
- և վերջապես, Որակավորման ապահովում չի ներկայացվում, եթե ընտրված մասնակիցը կամ տվյալ ընթացակարգի շրջանակում վերջինիս կողմից՝ որպես պաշտոնական ներկայացուցիչ, մատակարարվող ապրանքներն արտադրող կազմակերպությունը, հայտերը բացելու օրվա դրությամբ ունի միջազգային հեղինակավոր կազմակերպությունների (Fitch, Moodys, Standard & Poor's) կողմից շնորհված վարկունակության վարկանիշ առնվազն Հայաստանի Հանրապետությանը շնորհված սուվերեն վարկանիշի չափով:
- Ընդ որում, Որոշման 3-րդ կետով Որոշմանը տրվել է հետադարձ ուժ, այսինքն՝ այն տարածվում է մինչև ուժի մեջ մտնելը սկսված և չավարտված գնման գործընթացների վրա:

1.8. Գրավոր հիմքերում բացակայում են Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ ծանուցումը Մասնակցին պատշաճ ուղարկելու հանգամանքը ապացուցող փաստերը:

2. Պատվիրատուի Գրավոր հիմքերի դեմ առարկության հիմքերը և փաստարկները.

2.1. Մրցույթի հայտարարության 1-ին պարբերության համաձայն՝ Պատվիրատուն՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ» (...), հայտարարում է բաց մրցույթ, որն իրականացվում է (...)՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով: Իսկ Մրցույթի հրավերի 1-ին մասի 7.18 կետի համաձայն՝ պատվիրատուի կողմից էլեկտրոնային ծանուցումներն ուղարկվում են համակարգի միջոցով:

Պայմանագրի 8.15 կետի համաձայն՝ վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու <u>ծանուցումը</u> ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Վերոգրյալից հետևում է, որ Պայմանագրի 8.15 կետով սահմանված համաձայնագիրը կնքելու վերաբերյալ Մասնակցին պատշաճ ծանուցելու համար անհրաժեշտ է այդ

ծանուցումը Մասնակցին ուղարկել armeps.am համակարգի միջոցով: Հետևաբար, եթե ծանուցումը չի ուղարկվել armeps.am համակարգի միջոցով, ապա Մասնակիցն այդ հանգամանքի վերաբերյալ համարվում է չծանուցված, որպիսի պայմաններում Պայմանագրի կատարման ապահովումներ (որակավորման և պայմանագրի ապահովումներ) ներկայացնելու և ֆինանսական միջոցներ նախատեսվելու վերաբերյալ համաձայնագիրը կնքելու պարտականություններ Մասնակցի մոտ չեն կարող առաջանալ:

Նշենք, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իր որոշումներում [1] համարել է խախտում այն բոլոր դեպքերը, երբ Պայմանագրի կատարման ապահովումներ (որակավորման և պայմանագրի ապահովումներ) ներկայացնելու և ֆինանսական միջոցներ նախատեսվելու վերաբերյալ համաձայնագիրը կնքելու ծանուցումները չեն ուղարկվել armeps.am համակարգի միջոցով, և եզրահանգել է, որ հրավերով էլեկտրոնային գնումների armeps.am համակարգի միջոցով ծանուցում ուղարկել նախատեսելը ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և ժամանակին գործողություններն իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների սահմանմանն ու իրագործմանը և հետապնդում է իրավական որոշակիություն ապահովելու նպատակ՝ որպես պետությունում իրավական որոշակիության և կայունության միջոց:

Արդյունքում, Ցուցակում մասնակիցներին ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգերը, նման խախտմամբ կազմակերպված գնման գործընթացների շրջանակներում, գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից նշյալ որոշումներով մերժվել են:

Այսպիսով, սույն գործի փաստական հանգամանքների համաձայն՝ Գրավոր հիմքերում բացակայում են Պայմանագրի 8.15 կետով սահմանված Պայմանագրի կատարման ապահովումներ ներկայացնելու և համաձայնագիրը կնքելու վերաբերյալ ծանուցումը Պատվիրատուին ուղարկելու փաստերը, ինչը ողջամտորեն ենթադրում է, որ նշյալ ծանուցումները պատշաճ չեն ուղարկվել Մասնակցին, այն է՝ ծանուցումները չեն ուղարկվել armeps.am համակարգի միջոցով: Հետևաբար, այդ ծանուցումների հիմքով՝ Պայմանագրի կատարման ապահովումներ ներկայացնելու և ֆինանսական միջոցներ նախատեսվելու վերաբերյալ համաձայնագիրը կնքելու պարտականություններ Մասնակցի մոտ չեն կարող առաջանալ:

---

Ելնելով վերոգրյալից՝ կարծում ենք, որ այս Ընթացակարգի շրջանակներում անհրաժեշտ է կիրառել սույն դիրքորոշման մեջ նշված Բողոքներ քննող անձի նախկինում կայացրած որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումները և մեկնաբանությունները, ու Մասնակցին Ցուցակում ներառելու Ընթացակարգը մերժել:

Բացի այդ, Պայմանագրի 8.11 կետի համաձայն՝ Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին: Սակայն հարկ է նշել, որ նշյալ կետով սահմանված պարտականությունները կատարելու վերաբերյալ ապացույցները Գրավոր հիմքերում բացակայում են:

2.2. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն. «23) գնման գործընթաց՝ գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը.»:

ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետև նաև՝ Կարգ) 4-րդ կետի համաձայն. «4. Գնման գործընթացը հետևյալ գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է՝ 1) գնումների պլանավորում. 2) գնման գործընթացի կազմակերպում (ներառյալ՝ գնման առարկայի բնութագրերի հաստատումը). 3) պայմանագրի կնքում. 4) պայմանագրի կատարում և կառավարում:»:

414-Ն Որոշման 1-ին կետի 6-րդ կետով Կարգի 32-րդ կետում կատարվել են հետևյալ փոփոխությունները. «6) 32-րդ կետի՝ ա. 1-ին ենթակետի «գ» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «գ. իր կողմից հաստատված հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին: Որակավորման ապահովում չի ներկայացվում, եթե ընտրված մասնակիցը կամ տվյալ ընթացակարգի շրջանակում վերջինիս կողմից՝ որպես պաշտոնական ներկայացուցիչ, մատակարարվող ապրանքներն արտադրող կազմակերպությունը, հայտերը բացելու օրվա դրությամբ ունի միջազգային հեղինակավոր կազմակերպությունների (Fitch, Moodys, Standard & Poor’s ) կողմից շնորհված վարկունակության վարկանիշ առնվազն Հայաստանի Հանրապետությանը

շնորհված սուվերեն վարկանիշի չափով: Եթե գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գինը՝

- չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, որակավորման ապահովման չափը հավասար է ընտրված մասնակցի գնային առաջարկի տասնհինգ, իսկ գերազանցելու դեպքում՝ երեսուն տոկոսին»:»:

414-Ն Որոշման 3-րդ կետի համաձայն՝ որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է մինչև որոշումն ուժի մեջ մտնելը սկսված և չավարտված գնման գործընթացների վրա: Ընդ որում, որոշումն ուժի մեջ է մտել 27.03.2021 թվականին:

Վերոգրյալից հետևում է, որ պայմանագրի կնքումը, պայմանագրի կատարումը, այսինքն՝ պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը, այդ թվում՝ պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու վերաբերյալ համաձայնագիր կնքելը, տուժանքի ձևով պայմանագրի և որակավորման ապահովումների փոխարինումն այլ տեսակի ապահովումներով և այդ ապահովումների չափի որոշումը համարվում են գնման գործընթացի մաս:

414-Ն Որոշման 3-րդ կետից բխում է, որ Որոշումը տարածվում է մինչև 27.04.2021 թվականը սկսված և չավարտված գնման գործընթացների վրա: Այսպիսով, Որոշման ուժի մեջ մտնելու պահից, սկսված և չավարտված գնման գործընթացների մասով, պատվիրատուները իրավունք ունեն պահանջել մասնակիցներից որակավորման ապահովում գնային առաջարկի 30 տոկոսից ոչ ավելի չափով, ընդ որում՝ որակավորման ապահովումը, բացի բանկային երաշխիքից, կարող է ներկայացվել նաև ապահովագրական ընկերության կողմից տրված երաշխիքի ձևով: Իսկ Որոշման 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված որոշ պայմաններին բավարարելու դեպքում մասնակիցները իրավունք ունեն որակավորման ապահովում չներկայացնելու: Հետևավաբար, մինչև որակավորման ապահովում պահանջելը, պատվիրատուն պետք է պարզի մասնակցի համապատասխանությունը Որոշման 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված պայմաններին կամ հնարավորության տա մասնակցին ինքնուրույն ներկայացնելու այդ պայմաններին համապատասխանելու վերաբերյալ ապացույցները:

Փաստորեն՝ Որոշմամբ հեշտացվել է որակավորման ապահավման ներակայացման կարգը և մասնակիցներին այդ ապահովումը ներկայացնելու համար տրվել է ավելի լայն

հնարավորություն, անգամ սահմանվել են պայմաններ, որոնց բավարարելու դեպքում մասնակիցներն իրավունք ունեն այդ ապահովումը չներկայացնելու:

Սույն գործի փաստական հանգամանքներից երևում է, որ 11.03.2021 թվականի թիվ Ε/40/587-21 գրությամբ Պատվիրատուն պահանջել է Մասնակցից 15 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել 100 տոկոսի չափով որակավորման և 10 տոկոսի չափով պայմանագրի ապահովումներ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: 15 աշխատանքային օրյա ժամկետը ավարտվում էր 01.04.2021 թվականին: Ստացվում է, որ Որոշումն ուժի մեջ մտնելուց (27.03.2021թ.) հետո Պատվիրատուն իր նշյալ պահանջը թողել է անփոփոխ և շարունակել է Մասնակցից պահանջել 100 տոկոսի չափով որակավորման ապահովում: Մինչդեռ, Որոշումն ունի հետադարձ ուժ և ըստ այդմ, 100 տոկոսի չափով որակավորման ապահովում ներկայացնելու պահանջը 27.03.2021թ.-ից սկսած անհրաժեշտ էր փոփոխել և Մասնակցից պահանջել, որպեսզի վերջինս ներկայացնի որակավորման ապահովումը գնային առաջարկի 30 տոկոսի չափով: Ավելին՝ անհրաժեշտ էր մասնակցին տեղեկացնել, որ որակավորման ապահովումները, բացի կանխիկ փողի և բանկային երաշխիքի ձևից հնարավոր է ներկայացնել նաև ապահովագրական ընկերությունների կողմից տրված երաշխիքի ձևով: Բացի այդ, անհրաժեշտ էր ուսումնասիրության առարկա դարձնել Մասնակցի համապատասխանությունը 414-Ն Որոշման 1-ին կետի 6-րդ կետով սահմանված պայմաններին, քանի որ այդ պայմաններին համապատասխանելու դեպքում Մասնակցից որակավորման ապահովում պահանջվել չէր կարող:

Սակայն, հաշվի չառնելով վերոգրյալ հանգամանքները և խախտելով Որոշման դրույթները, Պատվիրատուն դրսևորել է անգործություն՝ չի փոփոխել 100 տոկոսի չափով որակավորման ապահովում ներկայացնելու իր պահանջը՝ 30 տոկոս որակավորման ապահովում ներկայացնելու պահանջով, Մասնակցին չի տեղեկացրել ապահովումը ապահովագրական կազմակերպությունների կողմից տրված երաշխիքի ձևով ներկայացնելու հնարավորության մասին և ուսումնասիրության առարկա չի դարձրել Մասնակցի համապատասխանությունը Որոշման 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված պայմաններին: Արդյունքում, այս անգործության պատճառով գնման գործընթացը Մասնակցի համար անհիմն կարպով բարդեցվել է, որի հետևանքով Մասնակիցը հայտնվել է Ցուցակում ներառվելու վտանգի առաջ: Նշյալից բխում է, որ այս Ընթացակարգի նախաձեռնման պատճառը ոչ թե Մասնակցի կողմից թույլ տված խախտումներն են, այլ Պատվիրատուի անգործությունն է:

2.3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության «Իրավական ակտերի աստիճանակարգությունը» վերտառությամբ 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «3. Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը»:

2014 թվականի հոկտեմբերի 10-ին Մինսկում ստորագրված՝ « «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» » պայմանագիրը վավերցավել է ՀՀ ազգային ժողովի 2014 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ ԱԺՈ-132-Ն որոշմամբ:

Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի 25-րդ հավելվածի «Գնումների ոլորտին ներկայացվող պահանջները» վերտառությամբ 2-րդ մասի 18-րդ կետի համաձայն. «18. Անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ կարող են սահմանվել հնարավոր մատակարարներին և մատակարարներին ներկայացվող պահանջներ՝ (…) գնման պայմանագրերի կատարման ապահովման վերաբերյալ:

Անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ սահմանվում է գնումներին մասնակցության հայտերի ապահովման չափը և ձևերը, ինչպես նաև գնումների պայմանագրի կատարման ապահովումը: Ընդ որում, գնումներին մասնակցության հայտերի ապահովման չափը չի կարող գերազանցել գնման պայմանագրի մեկնարկային (առավելագույն) գնի 5 տոկոսը, իսկ գնման պայմանագրի կատարման ապահովման չափը՝ գնման պայմանագրի մեկնարկային (առավելագույն) գնի (գնման կողմնորոշիչ արժեքի) 30 տոկոսը, (…):»:

Մրցույթի հրավերի 9.2 կետի համաձայն. «9.2 Որակավորման ապահովման չափը հավասար է ընտրված մասնակցի գնային առաջարկի չափին: Որակավորման ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Ընդ որում ապահովումը պետք է վավեր լինի առնվազն մինչև պայմանագրի կատարման արդյունքը պատվիրատուի կողմից ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող 90-րդ աշխատանքային օրը ներառյալ:

(…):

Որակավորման ապահովումը այն ներկայացնողին վերադարձվում է պայմանագրի կատարման արդյունքը պատվիրատուի կողմից ամբողջական ընդունվելուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

(…):

Որակավորման ապահովումը չի վերադարձվում, եթե այն ներկայացրած անձը խախտում է պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցնում է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:»:

Մրցույթի հրավերի 9.3 կետի համաձայն. «9.3. Պայմանագրի ապահովման չափը կազմում է կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսը: Պայմանագրի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի (հավելված 5) կամ կանխիկ փողի ձևով:

Պայմանագրի ապահովումը պետք է վավեր լինի առնվազն մինչև կնքվելիք պայմանագրով սահմանվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող 90-րդ աշխատանքային օրը ներառյալ: Պայմանագրի ապահովումը այն ներկայացրած անձին վերադարձվում է կնքված պայմանագրով ստանձնված պարտավորությունների ամբողջական կատարման դեպքում՝ ամբողջական պարտավորությունների կատարման ժամկետը լրանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում: (…)»:

Պայմանագրի 8.15 կետի համաձայն՝ «8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: (…): Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: (…):»

Մրցույթի հրավերով սահմանված պահանջներից հետևում է, որ գնման ընթացակարգին մասնակցած և այդ ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու իրավունք ձեռքբերած մասնակիցը, պայմանագիրը կնքելու համար պատվիրատուին է ներկայացնում «Պայմանագրի ապահովում» և «Որակավորման ապահովում» վերտառությամբ ապահովումները: Եթե մասնակիցը այդ ապահովումները չի ներկայացնում, ապա վերջինս զրկվում է պայմանագիրը կնքելու իրավունքից:

«Պայմանագրի ապահովում» և «Որակավորման ապահովում» վերտառությամբ ապահովումները հանդիսանում են պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման ապահովումներ, և այդ Ապահովումների ընդհանուր չափը կազմում է պայմանագրի գնի 110 տոկոսը: Ընդ որում, Պայմանագրի համաձայն՝ «Որակավորման ապահովումը» և «Պայմանագրի ապահովումը» Պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ հատկացվելու դեպքում՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, տուժանքի ձևով ներկայացված ապահովումները, փոխարինվում են բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով, եթե նախատեսված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է 10մլն. ՀՀ դրամը:

Նշյալից հետևում է, որ հրավերով և Պայմանագրով սահմանված դրույթները հակասում են ԵԱՏՄ մասին պայմանագրի նորմերին, քանի որ ԵԱՏՄ մասին պայմանագրի նորմերի համաձայն՝ գնման պայմանագրի կատարման ապահովման չափը չի կարող գերազանցել գնման պայմանագրի մեկնարկային (առավելագույն) գնի (գնման կողմնորոշիչ արժեքի) 30 տոկոսը: Մինչդեռ հրավերով և Պայմանագրով Մասնակցից պահանջվում է պայմանագրի կատարման ապահովումները ներկայացնել պայմանագրի գնի 110 տոկոսի չափով:

Վերոգրյալն ամփոփելով՝ կարծում ենք, որ հրավերում, այդ թվում՝ Պայմանագրում հարկավոր էր կիրառել ԵԱՏՄ մասին պայմանագրով սահմանված դրույթները և Ապահովումների չափը նախատեսել այնպես, որ դրանք չգերազանցեին տվյալ Գնման առարկայի առավելագույն գնի (կանխատեսված ֆինանսական միջոցների) 30 տոկոսը: Քանի որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության «Իրավական ակտերի աստիճանակարգությունը» վերտառությամբ 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «3. Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:»: Նշվածից էլ հետևում է, որ հրավերի 10.2 և 10.3 կետերի և Պայմանագրի 8.15 կետի դրույթները հակասում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և ԵԱՏՄ մասին պայմանագրի նորմերին այնքանով, որքանով այդ կետերով սահմանված Ապահովումների չափը գերազանցում է Մրցույթի շրջանակներում ձեռքբերման ենթակա գնման առարկայի մեկնարկային (առավելագույն) գնի (գնման կողմնորոշիչ արժեքի) 30 տոկոսը:

Ուստի, կարծում ենք, որ Պատասխանողը խախտել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության «Իրավական ակտերի աստիճանակարգությունը» վերտառությամբ 5-

րդ հոդվածի 3-րդ մասի և ԵԱՏՄ մասին պայմանագրի 25-րդ հավելվածի 2-րդ մասի 18-րդ կետի նորմերը: Ամփոփելով կարելի է եզրահանգել, որ Պատվիրատուն իրավունք չուներ Մասնակցից պահանջել 110 տոկոսի չափով պայմանագրի կատարման ապահովումներ:

2.4. Եզրափակելով դիրքորոշումը՝ կարծում ենք, որ գնման գործընթացի շրջանակներում պատվիրատուն դրսևորել է անգործություն և ոչ իրավաչափ վարքագիծ, որոնք հանգեցրել են սույն Ընթացակարգի նախաձեռնմանը և Մասնակցին կանգնեցրել են Ցուցակում ներառվելու վտանգի առաջ: Ուստի, Ընթացակարգից բխող բացասական հետևանքները չեն կարող մեկնաբանվել ի վնաս Մասնակցի:

3. Վերոնշվածն էլ փաստում է այն մասին, որ Պայմանագիրը միակողմանի լուծվել է ոչ իրավաչափ և հետևաբար այդ գործարքը անվավեր է կնքելու պահից»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է ամբողջությամբ մերժել ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից «Աքսիոմա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ՆԳ-2021/94 ծածկագրով ընթացակարգը:

«Աքսիոմա» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/94 ընթացակարգի շրջանակներում 19.04.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է վերը շարադրված դիրքորոշումը:

**3. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 07.04.2021թ. թիվ Ե/40/847-21 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի և ՀՀ կառավարության 04.05.2021թ. 526-Ն որոշման (այսուհետ Որոշում) 21-րդ կետի 2-րդ ենթակետի բ) պարբերության հրապարակվել է «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-28/20» ծածկագրով գնման ընթացակարգը «ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար «Ոչ ալկալիական տեխնոլոգիայի հիմքով ջրածնի գեներատորի» ձեռք բերման նպատակով, որի արդյունքում «ՀԱԷԿ» ՓԲԸ և ՌԴ ռեզիդենտ հանդիսացող «Աքսիոմա» ՍՊԸ-ի միջև կնքվել է ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-28/20-01/001 պայմանագիր»:

Հաշվի առնելով Որոշման 18-րդ կետը՝ «Աքսիոմա» ՍՊԸ-ին N Ε/40/587-21 առ 11.03.2021թ. գրությամբ ուղարկվել է թիվ 1-01/001 լրացուցիչ համաձայնագրի նախագիծը, որը հանդիսանում է ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-28/20-01/001 պայմանագրի անբաժանելի մասը:

Որոշման 33-րդ կետի 12-րդ ենթակետով սահմանված ժամկետում «Աքսիոմա» ՍՊԸ-ն չի ներկայացրել պայմանագրի անբաժանելի մաս կազմող լրացուցիչ համաձայնագրի բնօրինակները և հրավերով պահանջվող որակավորման և պայմանագրի ապահովումները բանկային երաշխիքների կամ դրամի տեսքով:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով որոշման 32-րդ կետի 16-րդ ենթակետը և ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-28/20-01/001 պայմանագրի 8.14 կետը, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծել է պայմանագիրը հիմք ընդունելով N Ε/40/587-21 առ 06.04.2021թ. գրությունը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով սույն ընթացակարգի շրջանակներում 19.04.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**4. <u>ՍՑ-ՆԳ-2021/94 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

ՍՑ-ՆԳ-2021/94 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «Աքսիոմա» ՍՊԸ-ի միջև 23.02.2021թ. կնքվել է թիվ «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-28/20-01/001» ծածկագրով գնման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրի 8.14-րդ կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար

ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովները Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

3. Պատվիրատուի կողմից 11.03.2021թ. aksioma737@gmail.com էլեկտրոնային փոստի միջոցով «Աքսիոմա» ՍՊԸ-ին տրամադրվել է համաձայնագրի նախագիծը և առաջարկվել 15 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել իր կողմից հաստատված համաձայնագիրը՝ պայմանագրի ապահովման (պայմանագրի գնի 10%-ի չափով) և որակավորման ապահովման (պայմանագրի գնի 100%-ի չափով) հետ միասին:

4. «Աքսիոմա» ՍՊԸ-ին ուղղված 06.04.2021թ. թիվ Ե/40/831-21 ծանուցմամբ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն հայտնել է, որ Ընկերության կողմից չեն ներկայացվել իր կողմից հաստատված համաձայնագրի բնօրինակը՝ կից փաստաթղթերով՝ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Ինչպես նաև Պատվիրատուն նշել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 8.14 կետը՝ միակողմանի լուծում է թիվ «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-28/20-01/001» ծածկագրով գնման պայմանագիրը:

5. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում 06.04.2021թ հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

**<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 13.04.2021թ. թիվ 26/26-1/5535-2021

գրությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 07.04.2021թ. թիվ Ե/40/847-21 գրությունը և կից փաստաթղթերը, ինչպես նաև՝ «Աքսիոմա» ՍՊԸ-ի դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 18-րդ կետի համաձայն՝ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման ընդհանուր գումարի նշման՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում համապատասխան լրացում կատարելու պայմանով: Ընդ որում, համապատասխան ֆինանսական միջոցներ

նախատեսվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն սահմանված կարգով փոփոխություն է կատարում գնումների պլանում, իսկ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման նպատակով համաձայնագիր կնքելու ծանուցումը և կնքվելիք համաձայնագրի նախագիծը պայմանագիրը կնքած անձին է ուղարկում գնումների պլանում փոփոխությունը կատարվելու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին: Որակավորման ապահովում չի ներկայացվում, եթե ընտրված մասնակիցը կամ տվյալ ընթացակարգի շրջանակում վերջինիս կողմից՝ որպես պաշտոնական ներկայացուցիչ, մատակարարվող ապրանքներն արտադրող կազմակերպությունը, հայտերը բացելու օրվա դրությամբ ունի միջազգային հեղինակավոր կազմակերպությունների (Fitch, Moodys, Standard & Poor’s ) կողմից շնորհված վարկունակության վարկանիշ առնվազն Հայաստանի Հանրապետությանը շնորհված սուվերեն վարկանիշի չափով: Եթե գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գինը՝

- չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, որակավորման ապահովման չափը հավասար է ընտրված մասնակցի գնային առաջարկի տասնհինգ, իսկ գերազանցելու դեպքում՝ երեսուն տոկոսին.

- չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, որակավորման ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով, բացառությամբ շինարարական ծրագրերի կատարման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության և տեխնիկական հսկողության ծառայությունների գնումների, որոնց դեպքում ապահովումը ներկայացվում է սույն պարբերությամբ նախատեսված երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով.

- գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, որակավորման ապահովումը ներկայացվում է բանկերի կամ ապահովագրական կազմակերպությունների կողմից տրամադրված երաշխիքների կամ կանխիկ փողի ձևով:

Նույն կետի 10-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե գնման ընթացակարգը կազմակերպվել է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման պահին նախատեսված չեն ֆինանսական միջոցներ, ապա որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացվում են միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով: Եթե պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման պահին նախատեսված ֆինանսական միջոցները գերազանցում են գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, սակայն պայմանագրի ամբողջական կատարման համար հետագայում ևս պահանջվում են ֆինանսական միջոցներ, ապա պայմանագրի և որակավորման ապահովումները, հատկացված ֆինանսական միջոցների մասով, ներկայացվում են երաշխիքի կամ կանխիկ փողի, իսկ պահանջվող ֆինանսական միջոցների մասով՝ միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով:

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագրով (նախագծով) սահմանվում է նաև, որ եթե պայմանագիրը կնքվել է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, սակայն տվյալ տարում նախատեսված չեն կամ նախատեսված են ավելի քիչ ֆինանսական միջոցներ, քան պայմանագրի գինն է, ապա պայմանագրում նախատեսվում է, որ հետագայում ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը կամ ծառայությունների մատուցումն իրականացվում են համաձայնագիր կնքելու միջոցով: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա պատվիրատուի կողմից համաձայնագիր կնքվում է, եթե պայմանագիր կնքած անձի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝

հաշվի առնելով սույն կարգի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: ***<u>Ընդ որում, պայմանագրի կողմը համաձայնագիրը կնքում, իսկ ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու մասին ծանուցումն ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:</u>***

Այսպես, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «Աքսիոմա» ՍՊԸ-ի միջև 23.02.2021թ. կնքվել է թիվ «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-28/20-01/001» ծածկագրով գնման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 8.14-րդ կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովները Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

Պատվիրատուի կողմից 11.03.2021թ. թիվ Ե/40/587-21 գրությամբ aksioma737@gmail.com էլեկտրոնային փոստի միջոցով «Աքսիոմա» ՍՊԸ-ին տրամադրվել է համաձայնագրի

նախագիծը և առաջարկվել 15 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել իր կողմից հաստատված համաձայնագիրը՝ պայմանագրի ապահովման (պայմանագրի գնի 10%-ի չափով) ***<u>և որակավորման ապահովման (պայմանագրի գնի 100%-ի չափով) հետ միասին:</u>***

«Աքսիոմա» ՍՊԸ-ին ուղղված 06.04.2021թ. թիվ Ե/40/831-21 ծանուցմամբ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն հայտնել է, որ Ընկերության կողմից չեն ներկայացվել իր կողմից հաստատված համաձայնագրի բնօրինակը՝ կից փաստաթղթերով՝ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Ինչպես նաև Պատվիրատուն նշել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 8.14 կետը՝ միակողմանի լուծում է թիվ «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-28/20-01/001» ծածկագրով գնման պայմանագիրը:

Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում 06.04.2021թ հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության 25.03.2021թ. N 414-Ն որոշման (ուժի մեջ է մտել 27.03.2021թ.) 1-ին կետի 6-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությունը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ.

«գ. իր կողմից հաստատված հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին: ***<u>Որակավորման ապահովում չի ներկայացվում, եթե ընտրված մասնակիցը կամ տվյալ ընթացակարգի շրջանակում վերջինիս կողմից՝ որպես պաշտոնական ներկայացուցիչ, մատակարարվող ապրանքներն արտադրող կազմակերպությունը, հայտերը բացելու օրվա դրությամբ ունի միջազգային հեղինակավոր կազմակերպությունների (Fitch, Moodys, Standard & Poor's) կողմից շնորհված վարկունակության վարկանիշ առնվազն Հայաստանի Հանրապետությանը շնորհված սուվերեն վարկանիշի չափով:</u>*** Եթե գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գինը՝

- չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ***<u>որակավորման ապահովման չափը հավասար է ընտրված մասնակցի գնային առաջարկի տասնհինգ, իսկ գերազանցելու դեպքում՝ երեսուն տոկոսին.</u>***

- չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, որակավորման ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով, բացառությամբ շինարարական ծրագրերի կատարման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության և տեխնիկական հսկողության ծառայությունների գնումների, որոնց դեպքում ապահովումը ներկայացվում է սույն պարբերությամբ նախատեսված երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով.

- գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, որակավորման ապահովումը ներկայացվում է բանկերի կամ ապահովագրական կազմակերպությունների կողմից տրամադրված երաշխիքների կամ կանխիկ փողի ձևով»:

Նույն որոշման 3-րդ կետի համաձայն՝ սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և ***<u>տարածվում է մինչև որոշումն ուժի մեջ մտնելը սկսված և չավարտված գնման գործընթացների վրա</u>***:

Այսպիսով՝ Ընթացակարգի վերաբերյալ փաստաթղթերի, մասնավորապես՝ Ընկերությանն ուղղված 11.03.2021թ. թիվ Ե/40/587-21 գրության ուսումնասիրության արդյունքում արձանագրում եմ, որ Պատվիրատուի կողմից Ընկերությանն ուղղված ծանուցմամբ ներկայացրած պահանջով՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում պայմանագրի գնի 100%-ի չափով որակավորման ապահովման չներկայացումը՝ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի տեսքով, քննարկվող դեպքում չի կարող հանգեցնել Ընկերության նկատմամբ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվության կիրառմանը, քանի որ մինչև այն ներկայացնելու համար նախատեսված ժամկետի ավարտը որակավորման ապահովման ներկայացման մասով ՀՀ կառավարության 25.03.2021թ. N 414-Ն որոշմամբ նախատեսվել է Ընկերության փաստացի վիճակը բարելավող նորմ, որը տարածվում է մինչև որոշումն ուժի մեջ մտնելը սկսված և չավարտված գնման գործընթացների վրա, ուստի նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ որակավորման ապահովում ներկայացնելու պարտականությունը գնման ընթացակարգին մասնակցի՝ տվյալ դեպքում «Աքսիոմա» ՍՊԸ-ի մոտ ծագել է Պատվիրատուի կողմից ուղարկված ծանուցումը ստանալուց հետո, իսկ սույն պարագայում Ընկերության փաստացի վիճակը բարելավող նորմի ուժի մեջ մտնելուց հետո Ընկերությունը չի ծանուցվել դրա վերաբերյալ, գտնում եմ, որ վերջինս չի կարող կրել ներկայացված հանգամանքների արդյունքում առաջացած

բացասական հետևանքները, այն է՝ «Աքսիոմա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 13.04.2021թ. թիվ 26/26-1/5535-2021 գրությամբ «Աքսիոմա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝** **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**